ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

«Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ն ստորև ներկայացնում է իր կարիքների համար **համակարգչային օժանդակ նյութերի և սարքավորումների** ձեռքբերման նպատակով կազմակերպված ՓՍՍ-ԳՀԱՊՁԲ-2021/19 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2021 թվականի մարտի 3-ին կնքված N ՓՍՍ-ԳՀԱՊՁԲ-2021/19-3 ծածկագրով պայմանագրում 2021 թվականի մարտի 24-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի /համաձայնագրի/ պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝ գնման առարկայի ձեռքբերման համար «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի 2021 թվականի բյուջեով և գնումների պլանով ֆինանսական միջոցների նախատեսում:

Փոփոխության նկարագրություն՝ «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի և «ՀԷՔՍԱԴԱ» ՍՊԸ-ի միջև կնքված Պայմանագրի շրջանակում 2021 թվականի մարտի 24-ին կատարված փոփոխությունների արդյունքում հաստատվել են ապրանքների գնման և դրա ձեռքբերման դիմաց վճարման ժամանակացույցները, համաձայն՝ 2021 մարտի 24-ին կնքված Համաձայնագիր 1-ի Հավելվածներ NN 1-ի և 2-ի:

Փոփոխության հիմնավորում՝ 2021 թվականի մարտի 3-ին կնքված N ՓՍՍ-ԳՀԱՊՁԲ-2021/19-3 ծածկագրով պայմանագրը կնքվել էր ՀՀ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, իսկ «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի կողմից ապրանքների ձեռքբերման պահանջը չի դադարել և ապրանքների ձեռքբերման համար «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի 2021 թվականի բյուջեով և գնումների պլանով նախատեսվել են ֆինանսական միջոցներ, որի արդյուքնում տեղի է ունեցել փոփոխություն նշյալ պայմանագրի մեջ, պահպանելով պայմանագրի 1.1, 8.5 և 8.15 կետերով սահմանված պահանջները:

Պատվիրատու՝ **«Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ**

PROMOTION